

պատները Հալէպի մէջ կանխիկ դրամով կը ծախուին 11 եւ 12 տուրքի կտորը, (տուրքադր հոս 12 շիլլինկ կ'արժէ) ուստի ողջ դրամով բուրդէ կերպասի մէկ ծրարը կ'արժէ 132 եւ 144 շահի: Տեղեկութեանց համաձայն Շամախիէն Հալէպ մէկ ամսուան ճանապարհ է, իսկ անկէ մինչեւ Թրիփոլիս վեց օրուան ճանապարհ, իսկ Թրիփոլիսէն Վենետիկ ծովով մէկ ամսուան կամ հինգ շաբաթուան նաւագնացութեամբ: Իմացածիս համաձայն ասիէ Վենետիկ կարելի է ճամբորդել երեք ամիսէն նուազ ժամանակի մէջ:..... Հայեր եւ ուրիշներ կը փափաքին մեզ հետ փոխանակել, մեզի տալով մետաքս գերսիի համար, նաեւ մեզի պիտի ծառայեն հայթայթելով ամէն տեսակ համեմներ, միայն թէ իրենց պէտք է տանք բաւական ժամանակ որպէսզի կարենան Հնդկաստանէն բերել, եւ մեզի պիտի յանձնեն ի Շամախի...»(1)

(1) Hakluyt's Voyages Vol. II, p. 44-45: 1581-ին Անգլիացի վաճառական ճան Նիւպէրի կը վկայէ որ Թաւրիզի մէջ մետաքսը հարկը շահի է, առանց որակն ու քանակը յիշելու, թէ եւ ըստ երեւոյթին պաղման մը կ'իլանի մետաքս հասկնալու է: Անգլիացիք սակայն չէին ուզեր կանխիկ դրամով գնել մետաքս, այլ կը ցանկային փոխանակել իրենց գերսիներով, եւ ատիկա կը հաստատուի Անգլիական վաւերաթուղթերով: Օրինակ, 1617-ին Արեւելեան Հնդկաց ընկերութիւնը կ'ապսպրէր իր ներկայացուցիչներուն կարգ մը կարեւոր կէտեր, որոնցմէ իններորդին մէջ կ'ըսուէր: «Դուք պէտք է Շահին կամ իր վաճառականներուն հետ պայմանաւորուիք ձեր ուղած մետաքսին արժէքին համար, որովհետեւ ես իմացած եմ որ այդ ապրանքը ամբողջութեամբ Թաւառորին (Ապպաս Ա.) կը պատկանի: Ընկերութեան գինը որոշեալ է, բայց քանի որ անոնք իրենց մետաքսին համար կը պահանջեն մէկ ու կէս ոսոյալ, ծովեզերք յանձնելի, կ'ենթադրեմ որ դուն դուրսէ կարենաս վճարել այդ գումարը եւ կամ 7 շիլլինկ 6 բէնս սթէրլինկ տալ 5 շիլլինկը մէկ ոսոյալ հաշուելով, Շիրազ յանձնելի: Ասիկա դուն պէտք է բուն գին հաշուես ծախքերուդ հետ, որոնք

Դարձեալ նոյն Անգլիացի ներկայացուցիչը, նոյն նամակով, կ'իմացնէ որ կարելի է նաեւ առեւտուր ընել Պարսից Շահին հետ, մետաքսի կամ ուրիշ ապրանքներու, եթէ Անգլիացիները ապրանքի փոխարէն հնչուն դրամ վճարեն: Աւելցնելով որ «տեղեկութեանց համաձայն, ինչպէս որ ես ալ կը նկատեմ, հայերը տարեկան կը բերեն չորս, հինգ եւ վեց հազար կտոր (կամ ծրար) բուրդէ կերպաս եւ լաթեր, բացի անոնցմէ որոնք ուրիշ անձեր կը բերեն: Եթէ ձեր յարգելիութիւնը կրնայ գտնալ արտածում կամ վաճառում հում մետաքսի եւ հունտով ներկուած մետաքսի, բացի հոս շինուած եւ գործուած ուրիշ մետաքսեղէններէ, որոնցմով կարելի պիտի ըլլայ շահիլ, այն ատեն հոս կարելի է զրկել ապրանքներու (Անգլիական կերպասներու) կարելոր մաս մը: Բայց կը վախնամ որ Վենետիկցիներէն պիտի արգելուիք, եթէ անոնք կարենան, քանի որ

կարծեմ թէ մեծ չեն: (I. O. վաւերաթուղթք O.C. No. 545: The Embassy of Sir Thomas Roe... 1615-1619. Vol. II):

Ուրիշ յանձնարարութիւն մը Ամտավազ փետրուար 4, 1617 (-18) թուադրեալ եւ Պարսկաստան թովմաս Պարզըրի եւ Էտուարտ Մէնօզի ուղղեալ: Երկրորդ յօդուած. «Նորին Բարձրութիւնը (Ապպաս Ա.) մեզի հետ պիտի հաճի փոխանակել տարեկան որոշ քանակութեամբ մետաքս, 8,000 հակ մետաքսէ նուազ ինչ որ իրեն հաճելի է (8,000 փոխանակելի մետաքսին առաւելագոյն չափն էր:Յ.Ք.), որ իրմէ պիտի գնուի 6 շիլլինկ, 6 բէնսի փառնար, եւ իր վաճառականները Շիրազ պիտի յանձնեն (մետաքսը): Որուն փոխարժէքը պիտի ստանայ մէկ երրորդ դրամով, մէկ երրորդը կերպասով, կլայէկով, սնդիկով կամ որեւէ համանման Անգլիական ապրանքով որն որ ուզէ, էտուարտ Գօնօզի որոշած գիներով, օրինակի համար կերպասը եարտան 37 շահիէն, իսկ մնացեալը հրապարակին ընթացիկ արժէքով, իսկ միւս երրորդը (Շահին վճարուելիք) համեմներով, շաքարով, կոճապղղպեղով, պողպատով, կերպասով եւ Հնդկական շահիով, այնպիսի տեսակէտով եւ որակով որ Նորին Բարձրութիւնը (Շահը) անուա-